ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 13 փետրավրի 2025թ.

2025 թվականի փետրվարի 13-ին, ժամը 10:30-ին, ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենքում տեղի ունեցավ մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Դանիել Դանիելյանը, անդամներՄերի Կարապետյանը, Աննա Մկրտչյանը, Լիդիա Պողոսյանը, Սարգիս Ղազարյանը, Վարուժան Մարտիրոսյանը, Կարինե Չոբանյանը և Հանձնաժողովի քարտուղար Անի Իգիթյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. ***ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի նախապատրաստական փուլի գործողությունների քննարկում:***

   Օրակարգի հարցը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով ստեղծելու, նրա գործառույթները սահմանելու, առաջարկների ներկայացնման հայտի և նախնական գնահատման աղյուսակի ձևաթղթերը սահմանելու մասին Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 12-ի N 64-Ա որոշումը:

Հանձնաժողովը ծանոթացավ Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 12-ի N 64-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցին, առաջարկների հայտին, յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան հաշվետվությունների ձևաթղթերին:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ժամանակացույցով հաստատված՝ բնակչության իրազեկման փուլի ժամկետները և հայտարարեց աշխատանքների մեկնարկը:

Որոշվեց՝

Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլում հանդիպում կազմակերպել վարչական բնակավայրերում և կից կառույցներում:

Կողմ-8 **Ձեռնպահ-0** **Դեմ- 0**

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դանիել Դանիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մերի Կարապետյան

_____ Աննա Մկրտչյան

_____ Լիդիա Պողոսյան

_____ Սարգիս Ղազարյան

_____ Վարուժան Մարտիրոսյան

_____ Կարինե Չոբանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անի Իգիթյան